

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ



Գրութիւնք եւ լեւ
տրուիր:

Հասցե

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երե կ'ուզե՛ք «Հայեցի»-ին մեջ աղոտ երեւնալ,

Պատշի՛ք սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ուժպէրթօ թագաւորն ու Մարկարիտա թագուհին Հոկ. 25ին այցելէր են Ս. Ղազարու Մխիթարեան միաբանութեան վանքը. ու անոր ամեն կողմերը այցելելով մանրամասն տեղեկութիւններ առեր են միաբանութեան կազմակերպութեան վրայ ու իրենց ստորագրու-
թիւններովը պատուէր են այցելուններու ալ-
պոմն որ Լորտ Պայրընի սրահին մէջ պահ-
ուած է:

Միաբանութեան բոլոր վարդապետներն ու եկեղեցականները 'ի նշան իրենց յար-
գանաց Նորին Վեհափառութեան թագուհին
ձեռքը համբուրեր են, որ ժպտուն գէմքով
ամենուն ալ յայտներ է իր բարեացակամու-
թիւնը: Ուժպէրթօ թագաւոր շնորհակալու-
թիւն յայտներ է Գեր. Վանահօր: Իրենց
եղած սիրալիր ընդունելութեան համար:

Մխիթարեան հայրերը Ն. Վեհափառու-
թեան ընծայիր են Հայ Արիշանի Սիրտաւանի
Ֆրանսերէն Թարգմանութենէն հատ մը, փա-
ռաւոր կերպով կազմուած:

— Սանասարեան վարժարանի խնամակա-
լութիւնը Պոլսոյ մէջ Իսմայէլ փաշա անուն
խանը 19,000 ոսկիի գներ է, իբր կալուած
նոյն վարժարանին:

— Մ. Մամուրեանի յորեկանին առթիւ
իրեն նուիրուած դրամական նուէրներուն
գումարը հասած է 500 ոսկիի:

— Նպաստից յանձնաժողովոյ կողմէ նո-
րէն 220 ոսկի զրկուեր է Վան, Աւրանեան
Ներսէս Սրբազանին:

— Մայր եկեղեցւոյ քահանաներէն Տէր
Արսէն Յովսէփեան: որ Տ. Խաչատուրի մա-
հէն ետքը անոր օրինակին հետեւելով 'ի նը-
պաստ Հիւանդանոցի հանգանակութեան դի-
մած էր, անցեալ երեքշաբթի օրը վախճա-
ներ է: Հանգուցեալը Գատը-գիւղի մէջ իր
ունեցած 3-400 ոսկիի արժողութեամբ տու-
նը երուսաղէմի վանքին կտակեր է:

(Այս բարեյիշատակ քահանան թիւ մ'ալ կա-
ւելցնէ կարգ մը կրօնականներու ցանցառ թը-
ւոյն վրայ, որոնք ազգէն առածնին ազգին կը
վերադարձնեն):

ԱՅՍՕՐՈՒԱՆ ԹՂԹԱԲԵՐ



ՄԱՀ ԱՇԸԳԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

Նախկին Պատրիարք Աշըգեան Խորեն արքեպիսկոպոս կարճատե հիւանդութենէ մը ետքը երեքշաբթի օրը վախճանեց ու մարմինը Մագրի գիւղէն Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցին փոխադրուելով, հինգշաբթի օրը օծման արարողութիւն կատարելէ ետքը թաղուեց է Շիշիի գերեզմանատունը :

Աշըգեան Պատրիարք հեօճէքի շէրիով 500 ոսկի կտակած է Արմաշի Դպրեմանքին :

— Իզմիրի առաջնակարգ Հայ վաճառականներէն Լորդֆէթ էֆ. Պալեօզեան, որ վերջերս Ամերիկա ուղևորած էր Ֆիլատէլֆիայի վաճառականական համաժողովին մասնակցելու համար իբրեւ ներկայացուցիչ Իզմիրի Առեւտրական սենեակին, Նիւ-Եօրք հասնելէն երեք օր ետքը (հոկտ. 22) կաթուածահար մեռեր է :

— Խառն ժողովը իր վերջին նստին մէջ հրահանգներ տուեց որ անկ է, որպէս զի պէտք եղած պաշտօնատունները գիմեն եւ հոգ տանին կայսերական Իրատէներուն գործադրութեանը համար :

— Ի նպաստ Հայ որբերու, վենետիկի Միխիթարեան միտքանութիւնը մօտեւս բացառիկ պրակ մը պիտի հրատարակէ գեղարուեստական պարունակութեամբ և պատկերազարդ հասոյթը այդ մարդասիրական նպատակին յատկացնելու համար :

— Ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ղրկելով ամեն կողմ, ծանոց որ ուրիշին անցագրով ուղեւորող անձէ մը պէտք է 25 ղրուշի տուգանք առնել . իսկ ուրիշին օսմանիէ (համիտիէ) թէզկէրէսին իբր իրենը ներկայացնելով անցագիր առնողներն ալ իբր խարդախ յանձնել ձեռնհաս դատարանին :

— Երկու շաբաթ առաջ գրած էինք թէ, Ֆիլիպէի քահանան՝ հակառակ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց՝ թողատրած էր Տաճարին մէջ ի ցոյց դնելու ֆօթօկրաֆ պատկեր մը . այժմ կը տեղեկանանք որ Պուլկարիոյ այցելու հովիւ Գեոր. Բարթուղիմէոս վ. Պապճեան՝ որ այս միջոցիս Սօֆիա կը գլուխուրդէր, յանդիմանագիր մը ղրկեց է յիշեալ քահանային :

Ցաւելով իմացանք որ Աստուծոյ հայրենասէր երիտասարդներէն Ոսկան Նազարեան որ քանի մը ամիսներէ ի վեր թոքախտէ կը տառապէր Ալեքսանդրիոյ մէջ, հոկտ. 13ին մեռեր է : Թաղման հանգէսը փառաւոր կերպով կատարուեց է ի ներկայութեան խուռն բաղմութեան իր համակիրներուն :

Յարգանք իւր յիշատակին :

— Սօֆիայէն կը գրեն Պէրլինի լրագիրներուն թէ բաղբային ու զինուորական պաշտօնեաներու ամսաթոշակներէն հարկւրին մէկ զեզ մը պիտի ըլլայ : Այդ կերպով առաջին տարին չորս միլիոն և երկուորդ տարին տասնըմէկ միլիոն ֆրանքի խնայողութիւն մը պիտի ըլլայ : Տուրքերն ալ տասը միլիոն ֆր. ի բարձրագուելով, տասնըվեց միլիոն ֆր. պիտի գոյանայ :

Բաքաթէսի քերթ. — Երկրագործական նախարարութեան որոշմամբ, որ վաւերացած է Կայս. իրատէով. Թուրքիոյ բոլոր նահանգներուն մէջ հասցուած բաթաթէսի բերքը տասը տարի զերծ պիտի մնայ տասնորդի տուրքէ :

Պոլսոյ ֆարաիները. — Նախարարաց Խորհրդոյ որոշմամբ որ վաւերացուած է Կայս. իրատէով, քարափի տուրք պիտի չառնուի վառելափայտէ, ածուխէ, տան կարասիներէ եւ անձնական գոյքերէ :

1899Ի ԳԻՍԱԻՈՐԸ

1899 թուականի տարեկան տնտեսական տեղեկագրի օրը կը համարին շատ փոքրագիններ Նոյ. 2ր. վաճառքի նոյն օրն «Երկիրս պիտի կործանի», այնու որ Բիելեյան գիսաւորն երկրիս ծածկան պիտի կտրէ: Սակայն ասոնց վաճառքն արդարացի չէ: Բիելեյան գիսաւորը 1846ին բայբայած է, հետեւաբար ինք չէ երկրիս ծածկան կտրողը, այլ Անգլոմեդիդներուն երամը, որոնց ծածկունքն վրայ հաւանականաբար այս կամ այն գիսաւորն ալ կ'ընթանայ: Բաց աստի Բիելեյան գիսաւորին բեկորներուն ալ պիտի հանգիստ երկիրս Նոյ. 15ին, սակայն այս շատ շատ սլացիկ աստեղաց հիւսնալի և անսնկու արժանի տեսարան մը պիտի ներկայացընէ:

Հ. Ամսթեայ

Եգիպտոսէն յորեր. — Բոս Սայիտէն կը գրեն թէ Ֆէրտինան տը Լէսէթի արձանին բացման ամիսը նոյեմբեր 5 | 17ին կատարուելիք հանդէսները շատ շքեղ պիտի ըլլան: Բոլոր պանդոկները այցելուներով լեցունած են: Սիւէզի ջրանցքին ընկերութեան կեդրոնէն մինչև արձանին տեղը տանող ծածկան զրօշներով ու լապտերներով պիտի զարդարուի: Ինքու շոգենաւին մէջ երեք հարիւր հոգինոց սեղան մը պիտի տրուի եւ յետոյ պարահանդէս մը որուն համար բազմաթիւ հրաւիրագիրներ ուղղուած են: Հաւանական կը նկատուի որ խտիվը նախագահէ այդ հացկերոյթին: Հինգ հարիւր հոգինոց սեղան մըն ալ ջրանցքի ընկերութեան մէկ տաղաւարին մէջ պիտի տրուի:



Գնուած հրաքարի մը. — Անգղիական ընկերութիւն մը՝ Մեքսիկոյի Պոպոկաան պէալ հրաքարը 250,000 գոլարի գնած էր վերջերս: Հրաքարին խառնարանին մէջ՝ կ'ըսուի թէ ծծմբոյ ամենամեծ խաւերը գտնուին:

ՅԵՌԱԳՐԱԿԱՆ

Աժանա Բոժոժիկ և Ընկ.

Ուսմը

Չուշտակ աբեղան այսօր հետեւեալ ծանուցումը ըրաւ ժողովուրդին.

«Սիրելիք Աստուծոյ.

Հաբաթը անգամ մը շապիկի պէս անուն փոխող կուսակցութիւն մը այս անգամ ալ «աղգայինի զուպուն հագած» այսօրէն սկսեալ ձեր մէջը թապախ պիտի պտտունէ. ուստի առատ առատ ողորմեցէք, գիտնալով որ ձեր տուրքն ու ողորմութիւնը ընդունելի պիտի ըլլան. . . ճաշարանապետներէ ու գարեջրատանց տնօրէններէ: Օրհնեալ էք եւ օրհնեալ լերուք. ամէն:

Թուրքազան

Անկենդանալին կենդանացնելու յոյսով փորը մենք վարժապետը բաղքէ բաղքէ կը պտտի ան աս համոզելու և նոր խաչագողական կուսակցութիւն մը կազմելու համար: Ջերմեանդութեամբ և կարեկից սրտիւ խնդրենք Ամենակալէն որ այս խնդր ազգը երկու օրը անգամ մը սունկի պէս երեւան եկող խաչագողներու ձեռքէն ազատէ, որովհետեւ ալ համը բոլորովին փախուցին:

Հեղարկրաս

Հոս հարսնիք մը տեղի ունեցաւ իր տեսակին մէջ եղական. տնեցիք հրաւիրեալները վերի յարկը սենեկի մը մէջ փակեցին ու իրենք վարի յարկը նուագարանը առած մինչև լոյս զուարճացան. կերտն ու կոնձեցին: Աստուան դէմ ալ հրաւիրեալներուն «տահա օթուրո՞ւրմուսընըզ պէ՞» ըսելով, զանոնք ծածկու գրին:

Եէնի մահալլէ

«Նոյ. 2ին աշխարհ պիտի կործանի» ըսելով երկու դրացի ընտանիքներ իրենց ձեռնուռան համար պատրաստած երեքական կազմի թէնէքէ պիպէթ թուռչունները անոր տօր բաժնեցին ու իրենք ալ նոյն գիշերը սուգը մտած անօթի պառկեցան:

Բոժ. — Աստուած շատ բաշել չի տայ:

Ատոնա

Նորէն գործադուլ ըրին Հացագործներուն . . . էշերը. այս պատճառաւ հացին գինը 5 փարա վրայ դրաւ:

ՄՐՏԱՄԱԾ ՀԵԾԵԾԱՆՔ



«Ա՛խ ինչո՞ւ չեմ մեռնիր Աստուած իմ, ինչո՞ւ իմ ցաւերուս կարեկցող մը չունիմ»⁷ կ'ըսէր անցեալ օր Թամզարոցի բազմամբոխ ընտանիքի մը պատկանող մի հայ կին: Կը նայէի անոր սեպ սև աչքերուն, կը հիանայի անոր ձև ու շարժումներին և անոր հայկական մաքուր առողջանութեան: Դէմքն ու գիմագծերը ահոսացած էին իր բաշածներէն և հոն դրօշմուկ էր անպայման տանջանքի մը կսկիծն ու դառնութիւնը: Անոր հոգին շատոնց արդէն կորուսեր էր ապրելու հաճոյքը եւ կեանքի թարմ պուրթութիւնը: Տխրած, տառապած, յուսահատ կը ձգէր նա «Ա՛խ ինչո՞ւ չեմ մեռնիր Աստուած. ինչո՞ւ իմ ցաւերուս կարեկցող մը չունիմ»:

Գաւառացի այս հէք կինը տիպար հայուհի մ'էր. ջերմ բարեպաշտ մը, նախանձախնդիր իր կրօնքին և իր ազգային անգին աւանդութեանց: Մայրենի եկեղեցւոյ գողտրիկ տաճարը, անոր վեհ սրբութիւնը ու անոր համար նահատակուողներու ստուար բազմութիւնը իր աչքին առջև կը բերեր նա. և երբ կը բանար իր ուռած աչքը որոնք ամենօրի թափած կրակ արտասուքներովը հրդեհուած, կարմրած ու խանձած էին գոգցես, միւս անգամ նկատելու համար այնտեղ պատկերն ու տեսիլը այն թանկագին օրերուն, զորս մեծ հիացումով դիտէր էր իր նահապետական ընտանեաց տաքուկ ծոցին մէջ. անցեալ օրերու այդ բաղքը յիշատակը կուգար անգամ մ'ալ ճգմելու իր հոգին ու սիրտը: Ատեն մը, գիւղին եկեղեցւոյ զանգակի հեշտ ու անուշ ձայնէն զուարթացած, թեթեւ թռչնիկներու պէս կը խմբուէին այդ բազմամբոխ ընտանիքի պատուական անդամները եւ ձեռք ձեռքի տուած կ'երթային մութն ու լուսին հաւատքի ու առաքինութեան այն վեհ ընդունարանը, այն սուրբ տաճարը որուն խաչն ու Աւետարանը, Սրբոց պատկերներն ու Ս. Աւագաբն, իրենց բարեպաշտ հոգւոյն հետ գաղտնի մտերմութիւն մ'ունէին կարծես և կապուած էին անոնք մի անբակտելի կապով իրենց համեստ սրտին հետ:

Իսկ հիմա, նոյն ընտանիքին պատկանող այդ կինը վշտակոծ մայր մըն է. ցաւագին, միացող հոգի մը, որուն ձայնն ու ձիչը, զգացումները և մայրենի եկեղեցւոյ մասին ունեցած անպայման սէրն ու իղձը՝ անմար, վաթսուումածայ ախտաւարակի մը բռնութեանը կը զոհուի, որ կը գոռայ իր ականջին թէ, «Պէտք չէ որ մկրտես տղաբզ Հայ եկեղեցիին սէջ»:

Ահա պիղծ ու ստոր հաւատարմութիւն մը ահա անորակելի բռնութիւն մը:

Պարկեշտառուն կինը իր սրտի ներքին կսկիծովը այրած ու մաշած, «Լաւ է որ զիրենք «ԱՆԱՆՈՒՆ» կոչեմ կ'ըսէ, բան տարիներու ծանրութեան տակ խելում, խորտակոնած ու անկրօն դարձած շողորդ ծերուկի մը անունը տամ անոնց»:

Ու ծերուկը որ ճաշարան, սրճարան ու ամեն նստած ու ելած տեղերը առիթ չի փախցըներ մեր նուիրական եկեղեցին նախատելու, իրեն մօտօք ըրած է սօսիայի լընը, (*) որ զինքը կը դրդէ հարէմական գերութեան դատապարտել իր հարսը, և անոր կրօնական ու բարեպաշտական զգացումներուն վրայ բռնաւ նալ:

Քառսունէն ետքը ըրածը թողածը չգիտցող այս անկրօն եկեղեցւոյ պաշտօնէութեան մասնակցելու ալ չէ ամչցած: Ուրեմն կը յորդորենք զինքը որ կամ հեռանայ այդ սրբազան վայրէն և կամ դադրեցնէ իր անշահ հալածանքները մեր եկեղեցւոյ դէմ, և բարեպաշտ կնոջ մը անհատական զգացումներուն ու համոզումներուն արգելք չըլլալով, թոյլատրէ կատարել ընդ փոյթ իր եղբորորդիներու մկրտութիւնը, ինչպէս որ կը փափագի զանոնք ծնող ու սնուցանող մայրը:

ՀԱՆԹ

(*) Այդ ծերուկը պէտք է գիտնայ թէ, տեսնուած են իրմէն շատ աւելի կարմիր սօսիալիզմներ, որոնք վերջին վայրկեանին Ժմեղայի գոչեցին ու 5—6, երբեմն ա՛լ աւելի ասորեկան հիւանդ գաւկնեռնին գիշերով եկեղեցի վազցուցին, մկրտեցին, զանոնք ժողովական իրաւունքէ չի զրկելու և կամ արտաքին գերեզմանի թաղել չտալու համար:



Ծ Ի Ծ Ա Ղ



Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 2 Ի Ն

ԱՇԽԱՐՀ ՊԻՏԻ ԿՈՐԾԱՆԻ ? ? ?

Երեքշաբթի իրիկուն տան մը մէջ հետեւեալ խօսակցութիւնը տեղի կունենար.

— Միսաք աղա, իմացա՞ր, նույնեմբեր երկուքին աշխարհք պիտի կործանի եղեր:

— Տէր ողորմեա, տահա նէլէ՛ր,

— Մենք խուրեռ-խուրեռ ելլող մը խըռչմաթ վրանուս պիտի անցնի, աշխարհքին չարբմիշ ընելով տակնուվրայ պիտի ընէ եղեր:

— Աստուած չառ քաշել չի տայ:

— Տագիգէին մէջ հարբճիք պիտի ըլլանք, ըսին:

— Աստուած խելք տայ:

— Աստուած խելք տան ի՞նչ է. չե՞ս հատար կոր. քովի քօքօնա թէսպինօին տղանու աղջիկը Պուլղարճա չիֆթնէսթ. նիք զաղէթային մէջը կարդացեր են:

— Աստուք ամենքն ալ պօշ խօսքեր են, մէկ երկու տարին անգամ մը աստանկ թէվաթուռ մը կեկայ ամա, բան մը չըլլար ու ըլլալիք ալ չունի:

— Աս հեղու արթըխ իլլէ պիտոր ըլլայ. թէքմիլ էվրօբաին զաղէթաները գրեր են:

— Գրեր են ամա ինտո՞ր գրեր են. ելլող մը պիտի անցնի երթայ ըսուած է, անանկ չարբմիշ ընելու, զարնելու, հարբճիք ըլլալու խօսք չի կայ. ասկէց զատ, ադ ելլողը 53 տարի առաջ մէյմըն ալ տեսնուեր է. ան ատեն չէ զարկեր տէ աս անգամ պիտի զարնէ:

— Մեղայ, ան ատեն չի զարներ տէ աս հեղու ճամբան շաշըմիշ կընէ կը զարնէ, ի՞նչ պիտի ըսես: Շմէնտըֆէռը պիլէ անանկ միւհքէմ տէմիրէ ճամբաներ ունի իքէն արասա հեղ մը ճամբէն կեկայ կոր:

— Կնիկ, կարճամտութիւն պէտք չէ, ելլողներուն ճամբան շըմէնտըֆէռի ճամբան չի նմանիր:

— Մեղի խօսք մը պէտք է եա՛, ըսենք քի զարկաւ տէ աշխարհքը տակնուվրայ ըրաւ, աճապա ի՞նչ կըլլայ:

— Ինծի հարցունես նէ՛ քէք աղա՛ր բան կըլլայ. ամեն օր ուտելու, խմելու, իլլէ հագուելու սգուելու համար ունեցած մտմտութէն կաղատինք:

— Հա, քու ուղածդ ալ ատիկա է քի մասրաֆ չընես:

— Ի՞նչ ալ պօշ խօսքեր կընես կնիկ, էն սօնը օր մը չպիտի մեռնինք, իշթէ հէքիմի, էզաճիի, տէրտէրի ու ժամկոչի կարօտ չեղած՝ մէկ ձայնով կաղատինք:

— Հիմա ես ինծի նայիմ քի, աս հաւատարմը առնելէս պէրի սիրտս վախ մը մտաւ, պիր թիւրիւ միտքէս չեկարկոր:

— Ասոր խօսայը կայ. քօքօնա թէսպինօյին գնա, աս տարուան դրած ճերմակ գինիէն պինիգ մը առ բեր, քեզի հետ գէմ դէմի նստինք խմենք, ֆեժ ըլլանք միտքերնաւ հանենք:

— Աղէկ ըսիր. աս գիշեր խըղարթմա ունինք, գինիին հետը աղա՛ր կերթայ. փարան տուր տէ երթամ առնեմ:

— Փարան ի՞նչ է, երեք տարի է բարի դրացնութիւն կընենք կոր. պինիք մը գինիէն ի՞նչ կեկայ. երկու ֆըչի ունին:

— Քա ճանըմ, ունին տէլի, հիշ փարասը կուտա՞ն:

— Ի՞նչ պիտի ըսեն տէ չի տան. նոյնմեր 2ին աշխարհ կործանելէն ետքը աս գինին ինչիս ֆայտա պիտի ընէ. թող հիմակուրնէ մեղի տան խըմենք ու իրենց համար աղօթք ընենք որ աշխարհ կործանի նէ՛ տէյ տակը չի մնան:

— Քուկին քէֆդ թամամ է եա՛, հիմա ալ քաշկուտութի կեկաւ կոր:

— Քաշկուտութի ի՞նչ է, շիտակ չէ՞ մի ըսածս, խըղարթմային հետ գինին գէշ կերթայ, քու խօսքովդ, քանի որ աշխարհ պիտի կործանի, քօքօնա թէսպինօյին գինին ալ հապը պիտի կըլլէ. պարէ հիմակուց թող մարդու խուրսախ մանէ:

— Կայնէ, խըղարթմա կըսենք կոր ամա, թէնճիրէն կրակին վրայ ձգեցի, չեկէ տակը առնէ. երթամ նայիմ.— ըսելով տիկին Մաղթալինէ խոհանոց կը մտնէ:

Քառորդ ժամ ետքը այն և կին սե-
ղան նստած կը ճաշէին:

— Հիւս սա իրզարթմային հետ
պահարլը բաթիւնան թուրշուսի մը ըլ-
լար նէ՛ բէք աղւոր կերթար, ըսաւ Մի-
սաք աղան:

— Ես լահանայ թուրշուսին ալ
խայիլ եմ՝ ամա, չի կայ: Նայէ՛, քօքօնա
թէսպինոյենք անցած օր 400 գլուխ լա-
հանան պիրտէն թուրշի գրին:

— Թուրշուսի խանութ կը բա-
նան կոր:

— Աս ի՞նչ ըսել է, պիւթիւն ձը-
մեռ շէնք շնորհք կուտեն:

— Ըրածնին մե՛ծ անխելքութիւն է:

— Ինչո՞ւ:

— Նոյեմբեր 2ին աշխարհ կործա-
նելէն ետքը թուրշին ի՞նչ պիտի ընեն:

— Աղէկ ամա, մինչև աշխարհք
կործանի նէ՛ ուտելիք կուզեն:

— Էյ հինգ վեց օրուան մէջ 400
գլուխ լահանա՞ պիտի ուտեն:

— 160 զրշի աղւոր խըսըր կով մը
մորթեցին, ձմեռուան սուճուխ բասոր-
ման շինեցին, խափուռման եփեցին...

— Խենդութիւն են ատոնք, որի՞
համար կընեն կոր, չէ՞ մի որ նոյեմբեր
2ին աշխարհ պիտի կործանի:

— Մենք ֆըշի մը պիպէռ թուր-
շուսի գրին, բրուսան թաղեցին, ելը-
լըխ սօխը կախեցին, քաթաթէսը բռե-
ցին ու ֆըշիով ճերմակ պանիրը քէօշէ
մը գրին, մենք ատանկ բան մը ըրինք:

— Վախ, վախ, վախ, ատ ի՞նչ պօշ
մարդիկ են եղեր, աշխարհ կործանելէն
ետքը ատ ըրածնեւրնին ի՞նչ ֆայտա պի-
տի ընէ:

— Իրեք ամիս է պուրթու ֆիս-
թան մը շինէ ըսելէն բերանս մազ բու-
սաւ. նայէ՛, քօքօնա թէսպինոյին էրի-
կը իրենց Ծնունդին՝ իրեք տարու իը-
րիսթօ տղուն անունն է տէյի կնկանը
մախաստան քէսմէ նոր ֆիսթան մը շի-
նել պիտի տայ եղեր:

— Իշթէ հիմա աղ մարդը կապուե-
լու խենդ մըն է եղեր պիտի ըսեմ. նոյ-
2ին աշխարհ կործանելէն ետքը դեկտ.
25ին Ծնունդը ո՞ւր պիտի տեսնայ քի
նոր ֆիստան շինելու կելլայ կոր:

— Էյ ես արուգաթի հետ խօսք

չունիմ, ըսաւ տիկին Մագթաղինէ, ան-
շուշտ համոզուելով որ չպիտի կրնար այս
խօսակցութեան մէջէն յաղթական դուրս
ելնել:

— Ես ալ կարճամիտի հետ խօսք
չունիմ, պատասխանեց Միսաք աղան ու
վերջալէտը դրաւ:

Ուրիշ տան մը մէջ.

— Նշանիկ աղա, ցուրտը կոխեց,
կէս ճամբան չի մնալու համար 2 առա-
պա տահա փայտ կուզենք:

— Երկու չէ՛ երեք պիտի առնեմ
ամա, նոյեմ. 3ին:

— Քէօմիւրնիս ալ քիչ է:

— Ան ալ նոյեմբ. 3ին:

— Առտուն տանտէրը եկաւ, «բէք
շատ նեղն եմ, ամսական մը բէշին թող
տայ» ըսաւ:

— Միտքը հասկցայ, ըսէ՛ որ նոյ-
3ին թող գայ:

— Հա, տեսա՛ր, պիտի մոռնայի,
աս շաբթու չորս անգամ է որ Յակոբի-
կին ամսականին համար դպրատունէն
խապար կուգայ կոր:

— Նոյեմբեր 3ին ըսէ:

— Էքմէքճըն ալ եկաւ քիչ մը ե-
ւել պակաս խօսքեր ըրաւ:

— Ինչ հախ ունի եւել պակաս խօս-
քեր ընելու. փարային խօսքը կանցնի.
նոյեմբեր 3ին թող գայ թէքմիլը առ-
նէ երթայ:

— Սա ք՛օշէի պախալնիցային ալ
160 զրուշ պա՛րտք ունիս եղեր:

— Հա, ի՞նչ կայ որ...

— «Պիր գաշ աղ շամ տըր տիւքեա-
նա օղրամայօր» ըսելով կարճ օրը չըրա-
խը հինգ հեղ վրաս կը խրկէ կոր:

— Բաթլամի՞շ կըլլայ կոր, նոյեմ-
բեր 3ին թող գայ որ հիսապը տամ:

— Բան մը պիտի ըսեմ՝ ամա, խրո
մեկլար:

— Ինչ է:

— Զատիկին առած բօթիւնիդ հի-
սապէն խունտուրածիին տահա 5 ֆը-
րանք պարտք ունիս եղեր:

— Ալլահալէմ՝ ատանկ հիսապ մը
ունենալու եմ, նոյեմբեր 3ին ըսէ:

— Թէրդի Գառնիկ աղան ալ խա-
պար է ըրեր :

— Անոր ալ նոյեմբեր Յին ըսէ :

— Ճանրմ նշանիկ աղա, նոյեմբեր
Յին բիանքօ պիտի քաշուի :

— Չէ, ինչէ՞ն հարցուցիր :

— Սանքի աս պարտքերը հաֆ-
թալըսով մը մաքրուելու բան չեն .
մէյէր քի . . .

— Կնիկ, նոյեմբեր 2ին աշխարհք
կործանելով, ես ալ մէկ խալէմէն պարտ-
քերս տուած պիտի ըլլամ. նոյեմ. Յին
եկողը մեղ հոս չպիտի գտնայ :

— Աշխարհք պիտի կործանի մի . . .

— Հապա՛, չիմացա՛ր :

— Ես անանկ հավայի խօսքերու
չեմ հաւատար. առոնք պիւթիւն զիւ-
յիւրտ թէսէլլիսի բաներ են : Նամուսու
ընտանիքին համար աշխարհքս ան օրը
կործանած ըսել է, երբոր պարտկաննե-
րը փոխառաց մանկուքներուն պէս կու-
գան գրանը առջև կը շարունին, հասկը-
ցա՛ր . . . պօշ խօսքերը մէկ թարաֆ ը-
նենք տէ՛ աշխատինք սահաթ մը առաջ
պարտքերնիս տանք, հանգիստ ընենք :

Սրճարանի մը մէջ.

— Նէ՞ հապէր Աստիկ աղա :

— Հայրըլար :

— Սէն տէ իշիթտի՞ն մի, նոյեմբեր
իքիտէ պիր գույրսուգլու երլտըզ կէլիպ
տիւնեայա չարբաճագ ըմըլ :

— Իշիթտիմ ամա, ագլըմ էրմէ-
յօր, նա՛սըլ չարբաճագ :

— Տուր քի սանա գօլայճա աղնա-
թայըմ. գույրուգլու երլտըզ օ կէճէսի
այա գարշը կէլիպ, օնուներա գառանպօլ
էտէճէք իմիշ :

— Էյ ֆալցօ ըստէգա օլուրա . . .

— Պէսպէլլի օ վագըթ տա եէնի
պիր գօլբօյա պէլէյէճէք տիր . . . :

ԽԵՆԴԵՐՈՒՆ ԲԺԻՇԿԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ

ԱՆՁԻՆՔ

Մէրթօ

Ֆրանսուա . . Մէրթի եղբօրորդին

Օգրէ Բժիշկ

Գլէռ Բժիշկին աղջիկը

Մարիէթ . . . Սպասուհի

Երեմի սպասաւորներ

Տեսարանն է բժշկին տունը

Չորս կողմէն դռներով սենեակ մը

ՏԵՍԻԼ Ա.

Գլէռ և Մարիէթ

(Վարագոյրը բացուելու միջոցին Գլէռ
սեղանին առջև նստած է, իսկ Մարիէթ խորի
դռնէն կը մտնէ) :

Գլէ — Մարիէթ, ժամը քանի՞ն է
արդեօք :

Մար. — Սրահին ժամացոյցը հիմայ
վեց զարկաւ :

Գլէ. — Ա՛հ Մարիէթ, էմսի տաք աղ-
բիւրներէն վերադարձնէս ի վեր զգա-
ցած տրտմութիւնս չեմ կրնար բացատ-
րել :

Մար. — Բայց ի՞նչ պատճառաւ օ-
րիորդ, կարծեմ դաշնակնիդ զարնելով
կրնաք հանգիստ ժամանակ անցունել .

Գլէ. — Երգերէ ձանձրացած եմ :

Մար. — Լաւ, բայց եթէ Բօլօնիայի
անտառը երթաք պտտիք, չէ՞ք կրնար
զբօսնուլ .

Գլէ. — Ձբօսանքէ ալ զլուեցայ :

Մար. — Եւ փառք յաւիտեանս ամէն.
ուրիշ ի՞նչ մնաց որ ըսեմ. ուրեմն գե-
ղեցիկ երիտասարդի մը հետ զբօսնեցէք :

Գլէ . — Մինչև ցարդ սիրտս գլաւող մը չգտայ :

Մար . — Զարմանալի՛ բան , էմսի աղբիւրները գտնուած ատեննիդ ձեր սըրտին ու բնութեանը յարմար մէկը չը կրցա՞ք գտնել :

Գլէ . — Մարիէթ , դուն խեղճ ես , ի՞նչ ես .

Մար . — Ներեցէք օրիորդ , ա՛լ խենդ չեմ :

Գլէ . — Առաջ ալ խենդ չէիր :

Մար . — Առաջները ձեր հօրը հրամանին անհնազանդ չգտնուելու համար խենդ էի , որովհետև հայրերնիդ ինքզինքը առաջին կարգի խենդերուն բժիշկը կարծելով միշտ կը պարծենար , ես ալ զինքը իւր արհեստին մէջ յառաջացնելու և փայլուն անուն մը վաստակեցնելու համար այն ատեն խենդ ձեռնացայ :

Գլէ . — Ո՛հ , ի՞նչ գժուարին արհեստ , մարդ այն խենդերուն մէջ ի՞նչպէս կըրնայ ժամանակ անցնել :

Մար . — Ընդհանրապէս ինքզինքը ամենէն խելացի կարծող մարդը ամենէն աւելի խենդ է :

Գլէ . — Փառք Աստուծոյ , որ մենք այն տեսակ խենդերէն ազատ ենք :

Մար . — Զճմարիտ է . եւ հայրերնիդ ալ անհանգիստ ընող բանը միթէ ասիկայ չէ՞ . իմ խենդ ձեռնալս ալ իւր սիրտը գրաւելու համար էր , խեղճ մարդը իմ խենդութեանս հաւտալով սկսաւ խել մը դեղեր չինել . հիմա ալ , իբր թէ իւր ձեռք առած միջոցներէն և տուած դեղերէն աղէկցայ , ուրախութենէն ամսականս աւելցուց :

Գլէ . — Այո , աշխարհիս մէջ իւր դեղերէն ու արհեստէն ի զատ ուրիշ բան մը աչքին չերևար , առ այժմ հօրս հետ սիրով ենք , մինակ անցիալ օր էմսի ջուրերը գտնուած ատեննիս ինձ պատահած մէկ դէպքը պատմելէս քիչ մը ներշնչաւ :

Մար . — Ի՞նչ դէպք էր այն :

Գլէ . — Քեզի չի վերաբերիր :

Մար . — Իմ միտքս եկածը այն երիտասարդ պարոնն է , որուն գործածած դեղերը ձեր հօրը գործածած դեղերէն աւելի կազդէ սիրահարեալ օրիորդաց :

— Գլէ . — Մարիէթ :

Մար . — Օրիորդ , ահա հայրերնիդ կուգայ , և շատ ալ մտմտութի մէջ է :

ՏԵՍԻԼ Բ .

Նոյնք և Բժիշկ

Բժի . — (Ծառայից) Տուած պատուէրներուս աղէկ ուշագրութիւն ըրէք , չըլլայ որ պանիօներուն քովէն հեռանաք , վերի տակառները միշտ լեցուն պահեցէք ջրով , կարելի է խենդ մը կը բերեն և պաղ ջուրը կոխել հարկ կըլլայ : հասկցա՞ք , ահա այսչափ , հիմա կրնաք գործերնուդ երթալ :

Գլէ . — Բարի լոյս , հայր իմ :

Բժի . — Բարի լոյս աղջիկս : Մարիէթ , հիւանդ մը կամ խենդ մը բերի՞ն :

Մար . — Ոչ տէր իմ , մէկը չերևաց :

Բժի . — Զարմանալի՛ բան , այս հիւանդութեան համար ունեցած վարպետութիւնս ամենեւնի ուրիշ մէկը չունի . խենդ մը իր գլխուն մազերէն բռնեցի՞ր մի , ամենէն առաջ կակղացուցիչ եւ ամօքիչ դեղեր գործածելու է , ետքը արիւնը գլուխը ցատկելով՝ քիթը , ականջները և աչուրներուն մէջը կարմրիլ ըսկըտելուն պէս՝ անմիջապէս վրան յարձակելու , քիթը կամ ականջները խածնելու է : Աստուծոյ հրամանաւ եւ արհեստիս զօրութեամբը 5 վայրկեան չանցած բժշկութիւնը կը գտնայ : Ահա այս ականջ խածնելը բժշկութեան վերջին միջոցն է : Ամերիկացիք իմ այս ականջ խածնելու կանոնս կենդանեաց վրայ կը գործածեն եղեր , բայց ես մարդկանց վրայ փորձելով , վերջապէս յաջողեցայ , և օրինակներէս մէկը իմ Մարիէթ ըսպատահիս է :

(Ծար .)

Отговорникъ М. Сконовъ
Печантица Взаимность — «Варна».